



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

**ՈՐՈՇՈՒՄ**

«28» հունիսի 2019 թվականի N 14/1

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 9/10  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Կատարել փոփոխություն ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 9/10 որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի 1-ին կետում՝ «ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում» բառերը փոխարինելով «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում» բառերով:
2. Նույն որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի 5-րդ կետում «2019 թվականի հունիսի 30-ը» բառերը փոխարինել «2019 թվականի հուլիսի 22-ը» բառերով:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ  
ՆԱԽԱԳԱՎ

Լ. ՅՈԼՅԱՆ